


«ՀԱՆԴԻՊՄԱՆ» ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Խ. ՓԱՓԱԶՑԱՆ, Ա. ԱՐՏԱՄՈՆՈՎ.

Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետախսի կոմբինատ

Մաքոքի «Հանդիպման» հանգույցը պատկանում է հաստոցի օժանդակ հանգույցների թվին։ Նա կատարում է մաքոքամղիչի (ԹՕԻԿ) ամորտիզացիայի ֆունկցիան և մեղմացնում է երախից (ՅԵԲ) երկմաքոք տուփի մեջ մտնող մաքոքի հարվածը։ № 2 մանվածքային ցեխի ռացիոնալիզատորներ Ա. Վարդանյանը, Գ. Գալստյանը և Գ. Աղարաբյանը պարզացրել և կատարելագործել են այդ հանգույցը։

Այսպես, շղթան ձևավոր բոլտով (նկ. 1 և 2) բռնակին (2) ամրացնելու փոխարեն առաջարկվել է շղթան (3) ամրացնել պատվող առանցքին (4), Վերջինս գտնվում է հատուկ վուանում (5), որը եռակցված է դեպի հակառակ կողմը շրջված նույն բռնակի (2) հետ։ Այս հարմարանքը թույլ




Նկ. 1. Հին կոնստրուկցիա։

է տալիս վերացնել շղթայի մաշվածքը վերևի ողակներում և բարելավում է քաղցի (ՊՈԳՈԱԼԿԱ) ամորտիզացիան։ Մաքոքային տուփի մեջ մաքոքի մտնելու ժամանակ մաքոքամղիչի հարվածը մեղմացնելու համար առաջարկվել է մի հատուկ բոլտ (6), որն ունի դեպի մաքոքի կողմը ուղղված մաշված եռակցին գլխիկ (7)։ Ուստինք գլխիկը

մեղմացնում է մաքոքամղիչի հարվածը և լիովին վերացնում նրա ետևի մասի մաշվածքը։

Զգալիորեն պարզացվել է նաև մեխանիզմի ներքեւի մասը։ Եթե հին կոնստրուկցիայի ժամանակ մղիչը լծակը պահպան էր կախոցի (9) միջոցով, որը պատվում էր առանցքի (9) վրա բատանի ծոծրակալին ամրացված հատուկ մերակում (10), ապա այժմ այդ դետալները բացակայում են։ Տվյալ դեպքում մղիչը լծակն իր ներքեւի մասում ունի պարզ կեռիկ (11), որի վրա հագցվում է զսպանակը (12)։ Զսպանակի ներքեւի



Նկ. 2. Նոր կոնստրուկցիա։

մասն ամրացվում է բոլտով (13), որն անցնում է շղթային կապի և ձգալարի անցքով։ Մղիչը լծակի վերևի մասը կապված է ամորտիզատոր շղթայի (3) հետ բռնակի (14) միջոցով։ Այսպիսի կոնստրուկցիան հնարավորություն է տալիս ազատվել ավելորդ դետալներից և պարզացնում է ամբողջ սիստեմը։